ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐԻ ՃԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բայի անդեմ ձևերի խոսքիմասային որոշարկման հարցում լեզվաբանները հիմք են ընդունում ինչպես նրանց ծագումնաբանական, այնպես էլ ձևաբանական տվյալները:

Թյուրքական լեզուների քերականությունները նկարագրող հեղինակներից մեծ մասը ինքնուրույն, անկախ գործողության անուններն ու ածական դերբայներն անվանում են *բայածանցյալ անուններ*, որը «մտածելու տեղիք է տալիս, որ բայի անդեմ ձևերը զարգացել են համեմատաբար ավելի ուշ և սերում են բայից»[1]:

Ռուս լեզվաբան Ա. Պոտեբնյան վճռականորեն հայտարարում է, որ «հարկավոր չէ դերբայը պատկերացնել անպայմանորեն բայածանցյալ բառ, այն չի առաջանում բայից, այլ հայտնվում է նրա հետ միասին»[2]:

Թյուրքագիտության մեջ վեճը այն հարցի շուրջ, *անունն* է եղել առաջնայինը, թե *բայը*, չի ունեցել այն սրությունը, ինչն առկա է հնդեվրոպագետների շրջանակում: Թյուրքագետներն երկար ժամանակ անփոփոխ ընդգծում էին անվան գերիշխող տեղը և այն ընդունում որպես բայի՝ ավելի ուշ շրջանի ձևաբանական դրսևորում: Սակայն, բնականաբար, թյուրքագետները ևս այս խնդրում ունեն տարակարծություններ: Հատկապես վճռականորեն հանդես է գալիս խորհրդային թյուրքագետ-լեզվաբան Պ. Ի. Կուզնեցովը, որը անթույլատրելի է համարում մի շարք թյուրքագետների այն կարծիքը, ըստ որոնց բայերը, բայի խոնարհված ձևերը առաջացել են գործողության անուններից: Ինքը՝ Կուզնեցովը, պնդում է, որ բայական խոնարհված ձևերը առաջացել են դերբայից առաջ[3]:

Ճանչված խորհրդային թյուրքագետ-լեզվաբան է. Վ. Սևորտյանը, թյուրքական լեզուներում գործող բայի անդեմ ձևերը անվանում է «բայական անուն»[4]: Խորհրդային մեկ այլ թյուրքագետ Ա. Շչերբակը, է. Վ. Սևորտյանի այս

---

[1] А. М. Щербак, Очерки по сравнительной морфологии тюрских языков глагол, Л. 1981, с.12. Հմմտ. նաև G.L. Lewis, Turkish Grammer, Oxford, Oxford Univ. press, 1967. Robert Under. hill. Turkish Participles.- Linguisyic Inquiry, v.3, N 1,1972, pp 87-99.

[2] А., А. Потебня, Из записок по русской граматике, I-II. с. 95.

[3] П. И. Кузнецов, Происхождение прошедшего времени на *-ды* и имен действия в тюркских языках.-В кн. : Тюрко-монгольское языкознание и фольклористика. с. 54, 66, 69.

[4] Э. В. Севортян, О Некоторых вопросах структуры предложения в тюркских языках - ИСГТЯ, III, .с. 9. է. Վ. Սևորտյանի գիտական գործունեության մասին մանրմասն տե՛ս К. М. Мусаев, Л. С. Ливетская, Эрвард Владимирович Севортян-"Советская тюркология", 1976, N 5, с. 102- 104, 1978, N 2, с.109-110.

գիտաբառը համարում է միանգամայն ճշգրիտ և հանգում այն եզրակացության, որ թյուրքական լեզուներում գոյականական ու բայական հիմքերի արտաքնապես համընկնումը պատահական չէ, այլ «ամենայն հավանականությամբ արտահայտում է խոսքի մասի կայացման ու զարգացման ինքնատիպ պատմական պրոցես»[5]: Ա. Շչերբակը, հաշվի առնելով հին և ժամանակակից թյուրքական լեզուներում բայական-անվանական նույնանուն լեզվական փաստերը, ինչպես նաև այս բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և ոչ-թյուրքական լեզվական նյութը, հանգում է այն եզրակացության, որ «թյուրքական նախալեզվում գրեթե ցանկացած սկզբնական արմատ նշանակել է և՝ առարկա, և՝ գործողություն-վիճակ, և եղել միմյանցից չտարբերակած»[6]:

Ա. Շչերբակը այն թյուրքագետ լեզվաբաններից է, ըստ որի բայական (հավանաբար նաև այլ լեզուներում) բայական ձևերի համար որպես նախնական նյութ հանդիսացել են *գործողության անունները*, որոնք ունեն անվանական հատկանիշների ընտրովի ինտենսիֆիկացման հակում:

Գործողության անունների քանակը թյուրքական լեզուներում Շչերբակը հաշվում է երեք-չորս տասնյակից ավելի: Դրանց մի մասը թյուրքական լեզուներում միանալով բարդ բառակազմական պրոցեսներին, ենթարկվել են նշանակալից փոփոխությունների, դրա համար էլ նրանց ընդհանուր-թյուրքական պատկանելիությունը դառնում է ակնհայտ միայն հատուկ քննության և ստուգաբանական ուսումնասիրությունների դեպքում: Այսպես՝ -mak, -mek-ով գործողության անունները բազմաթիվ թյուրքական լեզուներում՝ հատկապես Սիբիրի և Ալթայի, ամբողջովին անցել են գոյականների և ածականների կարգին[7]:

Գերմանացի լեզվաբան Հ. Հիրթը, դիտարկելով այս խնդիրը, հնդեվրոպական լեզուների հարթության մեջ, հայտնում է հետևյալ տեսակետը. «Երբ ես ասում եմ, որ բայը պետք է լինի անվանական ծագման, դրանով չեմ ժխտում բայի՝ վիճակ և գործողություն արտահայտող հասկացություն լինելը: Եվ առաջարկում է *verbum finitum*-ի փոխարեն օգտագործել *verbalnomina* տերմինը[8]»:

Ինչ վերաբերում է հնդեվրոպական լեզուներում անվան ու բայի հստակ սահմանազատմանը, ապա Ա. Մեյեն նշում է, որ այդ սահմանազատումը իրականացվում է, մասնավորապես, հենց հիմքերի սահմաններում, որոնց բնութագրական հատկանիշը մեծ չափով դառնում է ձևաբանական որոշակիությունը: Հակասնորեն առանձնացված են ոչ միայն անվանական և բայական հիմքերը, այլև անվանական և բայական հիմքերի ձևերը[9]: Քննելով համապատասխան

---

[5] А. М. Щербак, նշվ. աշխ., էջ 12:
[6] А. М. Щербак, նույն տեղում, էջ 12:
[7] А. М. Щербак, նույն տեղում, էջ
[8] H. Hirt, Indogermanische Grammatik, VI Heidelberg, 1934, s. 12.
[9] А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, с. 211.

ձևերն անգլերենում՝ Ջ. Քըրմը նշում է. «Ի հակադրություն բայի դիմավոր ձևերի, այսինքն՝ այն ձևերի, որ արտացոլում են դեմք, թիվ և եղանակ, գոյություն ունեն անդեմ ձևեր, այսինքն՝ այն ձևերը, որ չեն արտացոլում դեմք, թիվ և եղանակ: Այդպիսի ձևերն երեքն են՝participle, infinitive, gerund: Այդ ձևերի տարածված գործածումը անգլերենի ցայտուն հատկանիշներից է: Մեր քերականության և ոչ մի այլ մաս ներկայիս պահին չի զարգանում այդպես հզոր կերպով»[10]:

Թյուրքագետ լեզվաբանները կարծում են, որ որոշ լեզուներում անվան և բայի սահմանազատումը այդքան էլ հաստակ չէ: Այսպես՝ ֆինն-ուգրական, ինչպես և թյուրքական լեզուներում առկա են այնպիսի դեպքեր, երբ անվանական ու բայական հիմքերը արտաքնապես համընկնում են. օրինակ՝ հունգար. ,,*lep*,, -նշանակում է՝ 1. «ծածկոց», 2.«ծածկել», ֆինն. ,,*kule*,, - նշանակում է 1. «քամի», 2. փչել, ,,*kuiva*,, - նշանակում է՝ 1. «չոր», 2.«չորանալ», ,,*sula*,,-նշանակում է՝ 1. «հալոցք», 2. «հալվել»[11]:

Անվանական և բայական հիմքերի արտաքին համընկնում նկատվում է նաև թունգուզ-մանջուրական լեզուներում: Այսպես՝ նանայերեն՝ ,,*tugde*,,-նշանակում է՝ 1. «անձրև», «անձրևել», ,,*kolto*,,-նշանակում է՝ 1. «բռունցք», 2. «հարվածել»[12]:

Խնդրո առարկայի շուրջը եղած ուսումնասիրություններից պարզվում է, որ լեզվաբաններն այս հարցում բաժանվում են երկու խմբի. մի մասը կարծում է, որ անունն ավելի հին է, քան բայը, իսկ մյուս խմբի ներկայացուցիչները, պնդում են ընդհակառակը, բայը համարում են ավելի հին երևույթ:

Մ. Աբեղյանը, քննության ենթարկելով հայերենի բայի կազմությունը, ևս հաստակ չի սահմանազատում բայի կամ անվան առաջնայնության խնդիրը, քանի որ «Հնուց ավանդված ունինք բազմաթիվ բայեր, որոնք անուններից ածանցված, կամ ճիշտ ասած, լեզվի մեջ կան դրանց համապատասխան գոյական կամ ածական անուններ, բայց բայն է արդյոք անունից ածանցված, թե՞ ընդհակառակը, այդ հաճախ դժվար է իմանալ»[13]: Մ. Աբեղյանը թվարկում է բայերի մի շարք, որոնք ունեն իրենց համապատասխան անունները՝ *խնդրել, կատարել, սիրել, հոտել, գրել, պատվել կտրել, խոսել* և այլն: Դրանց համապատասխան անուններն են՝ *խնդիր, կատար, սեր, հոտ, գիր, պատիվ, կտոր, խոսք:* Սրանց կողքին թվարկում է այնպիսի հին ու նոր բայեր, որոնք չունեն իրենց համապատասխան անունները, սակայն սրանցից ևս կազմվում են նոր անուններ, «ինչ-

---

[10] G. Curme, A Grammar of the English Language, Boston, 1931, p. 488.
[11] Л. Хакулинен, Развитие и структура финского языка, I. Фонетика и морфология. М., 1953, с. 65, տես նաև տտեՆ. А. Серебенников, Историческая морфология пермских языков, с. 140.
[12] А. М. Щербак, նշվ. աշխ. էջ 11:
[13] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, «Միտք» հրատ., Երևան 1965, էջ 287:

պես «ծածուկ» բառից կազմվել է «ծածկել», իսկ վերջինիս «ել» վերջավորությունը դուրս ձգելով՝ ածանցված է «ծածկ»[14]:

Ա. Աբրահամյանը, հիմք ընդունելով ժամանակակից շատ բայերի և նրանց զուգահեռ անվանական անկախ հարաբերակցությունների պարզաբանման գործում պատմահամեմատական մեթոդով կատարված քննության և ստուգաբանությունների արդյունքները, հանգում է հետևյալին. «Եթե հաշվի առնենք ոչ միայն հնդեվրոպական հիմք լեզվի վերականգնված արմատների ու նրանց զանազան ձևերի, այլև ազգակից լեզուներում ժառանգվածների խոսքի մասային արժեքները ըստ համապատասխան իմաստների, ապա կարող ենք ասել, որ բայական և անվանական նշանակություններն այս կարգի արամատների մեջ նախապես անանջատ են եղել, նրանք կապված են եղել միմյանց հետ»[15]: Ա. Աբրահայմանը, տարբեր լեզվական փաստերով հիմնավորում է, որ ժամանակակից հայերենի բառապաշարի էական մասի մեջ մտնող հնագույն շերտում կան այնպիսի անվանական արմատական բառեր և նրանց հետ ընդհանրություններ ունեցող բայական բառույթներ, որոնք սկզբնավորվել են նախագրային շրջանում և զուգահեռ գալիս են այդ շրջանից (օրինակ՝ հարց// հարցանել//հարցնել, գործ//գործել, մարտ//մարտնչել և այլն): Այնուհետև հանգում է այն եզրակացության, որ լեզվի հնագույն շրջաններում գործողության և անվան գաղափարները ընկալվել են միասնաբար, «և ապա դարերի ընթացքում կատարվել են սինկրետիկ նշանակություն ունեցող արմատների իմաստային և ձևային ճյուղավորումներ, որոնց հետևանքը եղել է բայերի ու անունների ընդհանուր արմատով, բայց առանձին բառույթներով արտահայտվելը լեզվի մեջ»[16]:

Խոսելով թյուրքական լեզուների և ժամանակակից թուրքերենի գործողության անունների մասին՝ Ա. Շչերբակը կանգ է առնում նրանց ունեցած մեծ դերի վրա, առանց որի հնարավոր չէր լինի բայի առանձնացումը որպես ինքնուրույն քերականական կարգի: «Կազմվելով չտարբերակված սինկրետիկ բայական-անվանական հիմքերից, այն դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպես պրոցեսների և վիճակների անվանում, գործողության անունները հնարավորություն են ստեղծում խոսքի պահին լեզվական միջոցներով գործողության հարաբերության հաղորդման համար, ինչպես նաև արտահայտելու խոսողի վերաբերմունքը գործողության հարաբերության և այն կատարողի հանդեպ[17]»: Ա-վելի մանրամասնելով, Շչերբակը կարծում է, որ գործողության անուններում առկա են ժամանակակից թյուրքական լեզուների բայական ձևերի աղբյուրնե-

---

[14] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 288:
[15] Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 95: Տես՝ նաև Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1974, էջ 95:
[16] Ա. Ա. Աբրահամյան, նույն տեղում, էջ 97-98:
[17] А. М. Щербак, նույն տեղում, էջ 13:

ը, առկա են այնպիսի գծեր, որոնք որոշակիացնում են ժամանակի և եղանակի իմաստաբանական կառուցվածքը, չնայած որ նրանցում բացակայում է հարաբերակցությունը որոշակի ժամանակածևի և եղանակավորող նշանակությունների հետ[18]: Այս կարծիքին է նաև թուրք լեզվաբան Մ. Մանսուրօղլուն[19]:

Թուրք լեզվաբանների մի մասը անունները համարում են ավելի հին: Բ. Ա-թալայը բազմաթիվ լեզվական փաստերով փորձում է ցույց տալ, որ ժամանակակից թուրքերենում անուններն ակնհայտորեն ավելի հին են և բայական ձևերն էլ զարգացել և սերում են անուններից[20]:

Համաձայն Ա. Շչերբակի՝ գործողության անունների ամբողջական ձևաբանական յուրօրինակության պարզաբանման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լեզվական այս իրողությունները միատեղում են անվան և բայի հատկանիշները, թեև ավելի քիչ, քան «նախնական» բայական-անվանական հիմքերը[21]:

Խորհրդային թյուրքագետ Ն. Բասկակովը նույնպես թյուրքական լեզուներում նախնականը անունն է համարում, որը պահպանում է առարկայի սուբստանտիվ (գոյականական) հասկացողությունը: Պատճառն այն է, որ բոլոր ածականներն ու մակբայները սկզբից ունեցել են *սուբստանտիվ* նշանակություն և հետագայում՝ ավելի ուշ, գործածվել են *ատրտրուտիվ* (որոշչային) գործառույթով: Եվ եթե գործառութային բայածևերի համար գոյություն ունի չեզոք բայարմատ, ապա անվան գործառութային ձևի համար ծառայում է անունը՝ առարկայի սուբստանտիվ նշանակությամբ՝ այսինքն գոյականը[22]:

Անդրադառնալով անվան և բայի ծագումնաբանության խնդրին՝ թուրք լեզվաբան Մ. Էրգինը թուրքերենի անվանական հիմքերի մեծ մասը համարում է բայական ծագման: Նրա կարծիքով «Թուրքերենում գոյականական հիմքերի մեծ մասը առաջ են եկել բայական արմատներից, ինչը թույլ է տալիս եզրադրել, որ գոյականական արմատների՝ իրենցից ավելի քիչ կամ իրենց չափ հնչյուն (հնչույթ) ներառող բայական արմատների հետ կապված ձևերը վկայում են այն մասին, որ բայական արմատներն ավելի գլխավոր են և հիմնական: Սակայն խելամիտ չի թվում այն հանգամանքը, թե լեզվի ծագման ժամանակ խնդիրներն ու գործողությունները հնչյունավորվելիս գործողությունն ընկալվել է խնդրից առաջ: Հնարավոր է, որ որոշ խնդիրներ բնութագրվել են ըստ գործողությունների: Սակայն բավականին դժվար է ենթադրել, թե մարդը իրեն հանդիպած

---

[18] Ա. Մ. Щербак, նույն տեղում,

[19] M. Mansuroğlu. Türkçede-ğu Ekinin Fonksiyonlar.-Türkiyat Mecmuasý (1951-1953), Istanbul, 1953, X, s. 347.

[20] B. Atalay, Türk Dilinde Ekler ve Kökler Üzerine bir Deneme, Istanbul, 1942, s. 11.

[21] Ա. Մ. Щербак, նույն տեղում, էջ 14:

[22] Н. А. Баскаков, Историко-типологическая морфология тюркских языков. Изд. Наука",М., 1979, с. 40.

բոլոր խնդիրները բնութագրել է նմանատիպ ձևով: Ամենայն հավանականությամբ գոյականական և բայական արմատները, լեզվի ծագման հետ առաջ գալով, մեզ հայտնի ժամանակներից ի վեր միշտ հանդես են եկել կողք կողքի: Մեր ասածներն, անկասկած, քանի որ կապված են լեզվի ծագման հետ, ամբողջությամբ բաղկացած են տեսական ենթադրություններից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով գոյականական արմատների՝ բայական արմատներից ձևավորված լինելու ենթադրությունը՝ պետք է ասել, որ դա այսօր անհրաժեշտ է մի շարք այն գոյականական արմատների ծագումը լուսաբանելու համար, որոնք թվում է, թե հնարավոր չէ, որ ենթարկվեն մասնատման»[23]:

Թյուրքական լեզուների (մասնավորապես՝ թուրքերենի) դերբայների ու դրանց ծագումնաբանության ըստ հնարավորի համակողմանի ուսումնասիրությունը ներկայումս կարևորվում է ոչ միայն ճանաչողական, այլև հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված հայերեն դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման համար հենք ձևավորելու տեսանկյունից[24]:

---

[23] M. Ergin, Türk Dilbilgisi,, Istanbul, s. 106:

[24] Տես նաև Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան, ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցի շուրջ, Արևելագիտության հարցեր, Հոդվածների ժողովածու, հ. 6, Ե., 2006, էջ 296-318: Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան, Թուրքերենի դասագիրք, Ե., 2004, գիրք Ա: